ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե- 3288

«20» ապրիլի 2022թ.

ՋՈՒԶԵՊՊԵ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների և ձայնագրառման համակարգերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Ջուզեպպե ՍՊԸ-ի հայտի գնահատման արդյունքում ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

- ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2 կամ Հավելված N 1.3) և հայտի ապահովումը,
- 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չեն առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը,
- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական, ռուսերեն լեզվով մասնակցի անվանումը լրացված չէ (լրացված է մասնակցի հայերեն անվանումը), ինչպես նաև փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **ապրիլի 21-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները: Ընդ որում, հայտի ապահովումը բանկային երաշխիքի ձևով ներկայացվելու դեպքում բանկային երաշխիքի բնօրինակը՝ **<u>ուղեկցող գրությամբ</u>** գնահատող հանձնաժողովին պետք է ներկայացվի մինչև սույն թվականի **ապրիլի 21-ի՝ Երևանի ժամանակով ժամը 18:00-ն ներառյալ:**

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ Ձեր տվյալները՝ համապատասխան հիմքերով, կուղարվեն լիազորված մարմին՝ Ձեզ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788